Հաստատում եմ՝
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

_____ Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

02.07.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 26.06.2015թ.-ի թիվ 81 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի Վայքի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում անցկացվեց 2015թ.-ի բյուջետային տարվա գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց գործակալության պետ՝ Ա.Մարգարյանը:

Նախնական տվյալներ.

Գործակալությունում ընդգրկված են 1 գլխավոր մասնագետ, 2 առաջատար մասնագետ և 2 երկրորդ կարգի մասնագետ: Գործակալությունը ղեկավարում է գործակալության պետը: Գործակալությունն ունի կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Գործակալության պետն և աշխատակիցները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Գործակալության գործառույթներն են՝ ընտանեական նպաստների վճարում, սոցիալական նպաստների վճարում, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների վճարում, հրատապ օգնությունների վճարում և ավանդների դիմաց փոխհատուցում:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում գործակալության գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

Գործակալության կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Փախստականների մասին>>, <<Սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական անհատական քարտերի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Համադրել ենք <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Փախստականների մասին>>, <<Սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական անհատական քարտերի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված, մարզպետին վերապահված լիազորությունները գործակալությանի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ: Գործակալության կողմից առ 01.06.2015թ.-ի դրությամբ սպասարկվել են՝ 1376 քաղաքացի ընտանեական նպաստների ծրագրով 46491.5 հազ.դրամ ընդհանուր գումարով, 448 քաղաքացի սոցիալական նպաստների ծրագրով 7837.0 հազ.դրամ ընդհանուր գումարով, 405 քաղաքացի մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների ծրագրով 7650.0 հազ.դրամ ընդհանուր գումարով, 145 քաղաքացի հրատապ օգնությունների ծրագրով 2465.0 հազ.դրամ ընդհանուր գումարով և 14 քաղաքացի ավանդների դիմաց փոխհատուցում ծրագրով 2570.2 հազ.դրամ ընդհանուր գումարով: Առ 01.06.2015թ.-ի դրությամբ նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թիվը կազմել է 19 ընտանիք, հրատապ օգնությունների ծրագրում ընդգրկվել է՝ 1-ին եռամսյակում՝ 62 քաղաքացի և 2-րդ եռամսյակի 2 ամիսներում՝ 83 քաղաքացի:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ գործակալության կանոնադրությամբ և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, ոլորտը կարգավորող օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Գործակալության պետ՝ Ա. Մարգարյան